4088
Հայերեն

1866-ԱՀ
26
Ս-50
264
4088

# ԳԻՐՔ

## ՀԱՆԳԻՍՏԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՏՕՆԻՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆԱՑ։

Շարակարգեալ 'ի Սիմէօն Կաթուղիկոսէ ամենայն հայոց երեւանցւոյ՝ յաւելուածովք նորաշխօս շարականաց և աղօթից ։

Յամի Տեառն 1771. յուլիսի 10 ։

Տպեալ երրորդ անգամ ։

'Ի Հայրապետութեան Տեառն Յովհաննու Արբահմագոյն Կաթուղիկոսի ամենայն հայոց ։

Յամ Տեառն 1833. հոկտեմբերի 9 ։

'Ի Տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Է. Ջ.Մ.Ի.Ա.Ծ.Ն.Ի ։



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## Յառաջաբանութիւն Հեղինակին ։

Եթէ հարկադրիմք 'ի սուրբ գրոց և մանաւանդ 'ի Առաքելոյն Պօղոսէ՝ աղօթել հասարակապէս վասն ամենայն Թագաւորաց։ Ապա ո՜րքան ևս հարկ է 'ի վերայ մեր աղօթել վասն քրիստոնէից Թագաւորաց, որով անունն քրիստոսի փառաւորի. և սուրբ խաչ նորին պայծառացեալ փայլէ ընդ ծագս տիեզերաց ։

Արդ եթէ այսպէս, ապա ո՜րքան և ո՜րքանապատիկ հարկ է 'ի վերայ մեր, և ո՜րպէս պարտական իսկ եմք աղօթել վասն մերոյս յոգներախտի և խնամաշատի աստուածազարդի քրիստոսապսակի, գերահռչակ և պայծառ անուն ԵԿԱՏԵՐԻՆԷ Կայսերուհւոյն Մօրն ողորմութեան, որ իբրև զարեգակն փայլէ ընդ արեգակնափայլ Արքայ որդւոյն իւրոյ ՊԱՒԼ ՊԵՏՐՈՎԻՉԻՆ. և զուարճացուցանէ ո՛չ միայն զընդ հովանեաւ իւրով եղեալսն, այլև զամենայն երկրպագուսն քրիստոսի։ Ընդ ՈՐՈՑ հովանաւորութեամբն և ազգս մեր կեայ լաւապէս և պահպանութեամբ ՆՈՐԻՆ, կենցաղավարի ապահով. և աներկիւղ յամենից թշնամեաց։ ՈՐՈՅ զգութն և զխնամսն հանապազ տեսանէ, և ողորմութիւն վայելէ միշտ։ Որև բաց 'ի յայսպիսեաց հանապազափիւռ և հասարակաբաշխ բարերարութեանցն՝ 'ի ներկայումս և ևս գերազանցապէս զողորմութիւնս և զբարերարութիւնս եցոյց յատկապէս ազգիս մերոյ և մերում անարժանութեան՝ քան զարժանն մեր. լսելով աղերսանաց մերոց և կատարելով զխնդիրս. այսինքն՝ ԻՒՐՈՎ գերազօր հրամանագրովն, և անպարտելի կնքովն՝ զաթոռս ամենայն հայոց զուրբ

Աջմեծին պսակեալ փառաւորեաց · զազգս Հայոց՝ ի սոյն ամենապայծառ Թագաւորութեան սիրելի և խոյսին արձանագրեաց · և զանարժանութիւնս մեր յառաւել սիրոյ և ողորմութեան նշանաւ խիլայազարդեաց և մխիթարեաց ։ Արդ որովհետև այսքան գերազանց բարերարութեան ոչ ինչ կարեմք հատուցանել զփոխարէնն · վասն որոյ զայս քան բանս շարագրեցաք վասն մեծապայծառ Տօնախմբութեան ՆՈՐԻՆ · և կանոնեցաք զի ազգս Հայոց որքան գոն ընդ օրհնեալ տէրութեամբ ՆՈՑԻՆ 'ի յաւուրս շնորհալի տօնից ՆՈՑԻՆ եկեղեցականք և աշխարհականք մեծաւ հանդիսաւորութեամբ կատարեսցեն զայս կարգ ։ զոր ամենաթագաւորն աստուած 'ի փառս իւր համարելով լուիցէ, և ըզ խնդրուածս բազմութեան կատարեսցէ, ամէն ։

Քրիստոսի նուաստագոյն ծառայից ծառայ
Երեւանցի Սիմէօն Կաթողիկոս ամենայն
Հայոց և Սրբոյ Աստուածաէջ Աթոռոյս
Էջմիածնի ։
'Ի Թուին Փրկչին 1771 · 'ի Յունուարի
ամսոյ 10 · [illegible] ։

Նա

Եւ յաւուր պատարագին վառեսցեն զՃրագս և զաշտանակսն և զխնկեղսն, և երկու դպիրք յառաջոյ սեղանոյն ընդ աջն և ընդ ահեկէ ունիցին զխնկեղէնս 'ի ձեռս. յորժամ և ամենայն հոգևորականք ունելով ըստ իւրաքանչիւր աստիճանի զշուրջառ կամ զշապիկ եկեսցեն յատեանն: Եւ պատարագիչն եթէ իցէ Արք եպիս_կոպոսն կամ վարդապետն և կամ աւագ երէցն Եկեղեցւոյն՝ ձեռնահեն 'ի բեմն յաւուր վերջին աղօթիցն որ է. Աստուածն օրհնաց և մարգարէից. Իսկ ըստ՝ Օրհնե_ցից զտէր: և Օրհնեալ եղերուքն:

Քարոզեսցէ սարկաւագն:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք. ընկալ կեցո՛ և ողորմեա:

Եւ պատարագիչն արկանելով զխունկ 'ի բուրվառն ասասցէ:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Եւ առեալ զբուրվառն խնկարկեսցէ ընդ սեղանոյն և ամենայն եկեղեցւոյն յեկեղեցւոյ հոգևորականաց և ժողովրդականաց երկիցս կամ երիցս անգամ. յորժամ և կայցեալն յա_տենի սկսանիցեն մաղթանս 'ի մասին երգել քաղցր ձայնիւ զշարական. ԴՃ. Միածնազօր Աստուած և այլն:

Իսկ եթէ պատարագիչն իցէ այլ ոք 'ի հոգևորականաց՝ մինչ յաւուր պատարագին զգես_տաւորեսցի ընդ Արք եպիսկոպոսն կամ վարդապետն և կամ աւագ երէցն՝ և կամ այլ ոք յառաջաւորաց եկեղեցւոյն, և կայցէ յատենի 'ի մէջոյ խորան. Եպիսկոպոսն ու_նելով 'ի ձեռս զգաւազանն և զխաչ, և այլքն զխաչ միայն. և յորժամ պատարագիչն աւարտեսցէ զաղօթսն: Աստուածն օրհնաց: Նա ընդ՝ կայցէ առաջին յառաջոյ սեղանոյն ունելով զաւետարանն 'ի կրծին: յորժամ յառաջ մատուցեալ սարկաւագն առ Արք Եպիսկո_պոսն և կամ առ այլոյն զգեստաւորեցելոյն՝ քարոզեսցէ: Եւ ևս խաղաղութեան: և նա արկանելով զխունկ արասցէ ասելով՝ որպէս և գրեցեալն է:

Եւ աւարտեալ զխնկարկութիւնն մինչ յերգելն շարականին՝ եկեալ կայցէ 'ի մէ_ջոյ խորան:

Շարական (ԴՃ)

Ամենազօր Տէր և Թագաւոր յաւիտենից, որ 'ի պատ_կեր քո երկնաւոր և աներևոյթ Թագաւորութեանդ, հաս_տատեցեր յերկրի Թագաւոր ըզ ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչն (կամ այս անուն) 'ի կառավարել և 'ի պահպանել զքո ժողովուրդ. պահեա զսա անսասան և անպարտելի:

Աղբիւր կենաց և պարգևիչ խա_ղաղութեան և զօրացուցիչ քոյոց ծառայից. յաւել զկեանս խաղաղա_կանս 'ի քէն պսակեցեալ Արքայի մերոյ ՆԻԿՈԼԱՅ Պաւ_լովիչի (կամ այս անուն) և զօրացո՛ 'ի

Թշնամեաց պատերազմի 'ի փառս անուանդ և 'ի պայծառութիւն եկեղեցւոյ քում սրբոյ. յորում փառաւորի անդադար տէրութիւնդ քո :

Բարձրացո՛ տէր և փայլեցո՛ զգաւազան իշխանութեան ՍՈՐԻ. ընդ ամ ծագս երկրի. ընդարձակեա՛ շառաւիղօք և հարազատ ժառանգակցօք մինչև 'ի կատարած աշխարհի. այլև օրհնեա՛ և պահպանեա՛ զամենեսեան որք ընդ իշխանութե ՍՈՐԻՆ, ենթադրին. յորոց փառաւորի անդադար տէրութիւնդ քո :

Թագաւոր երկնաւոր՝ զեկեղեցի քո անշարժ պահեա՛, և զերկրպագուս անուանդ քում պահեա՛ 'ի խաղաղութեան :

Այս երգս 'ի ղորդա գնացեալ ձայնան՝ դնն ասասցէ: Ալէլու" ալէլու" : Ըսդուն: Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւորն և այլն:

Ըստ այսմիկ առն առ առն ակլմաեայէն դնչև յեօրնէրորդ առննն:

Ալէլուիայ ալէլուիայ:

'Ի կատարած. Սաղմոս Դաւթի. Ի:

Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւորն. 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ:

Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա. և զկամս շրթանց նորա ո՛չ արգելեր 'ի նմանէ:

Ժամանեալ արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո. և եդեր 'ի գլուխ նորա պսակ 'ի քարէ պատուականէ :

Կեանս խնդրեաց 'ի քէն՝ և ետուր նմա ընդ երկայն աւուրս յաւիտեանս յաւիտենից :

Մեծ են փառք նորա 'ի փրկութեան քում. զփառս և զմեծ վայելչութիւն դիցես 'ի վերայ նորա:

Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից . և ուրախ արասցես զնա յուրախութիւն երեսաց քոց:

Թագաւոր յուսացաւ 'ի տր. յողորմութենէ բարձրելոյն նա մի՛ սասանեսցի:

Ըստ յաւարտէն աղմոսոյ՝ 'ի շուրջառ ունեցօղ քահանայից տաս առ տաս դ չինէ դոյ յառաջ մատուցեալ յաւէտն՝ ընծեցայէն շնորէօէն ընծեցյոսածն :

Բն

## ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԱՌԱԿԱՑ:

ԺԱ. լա. 1:

Ամենայն բանք աստուածոյ խօսեցեալք են հրաման Թագաւորի զոր խրատեաց զ՚ս մայր իւր: Բա՛ց զբերան քո բանիւ այ · և դատեա՛ զամենեսեան ողջմտութեամբ: Բա՛ց զբերան .քո և դատեա՛ իրաւամբք · և խնդրեա՛ և որոշեա՛ զաղքատն և ըզտկարն: Փառք այ ծածկեն զբանս և փառք Թագաւորի պատուեն ըզհրամանս: Երկին բարձր և երկիր խոր սիրտ Թագաւորի անքնին: Փո՛րձ տե՛ս զանփորձ արծաթոյ և սրբելով սրբեսցի ամ: Սատակեա՛ զամբարիշտս յերեսաց Թագաւորի · և ուղղեսցի արդարութեամբ աթոռ նորա: Մ՚ի հպարտանար առաջի Թագաւորի և 'ի տեղիս մեծամեծաց մի՛ մտանիր · զի լաւ է քեզ՝ թէ ասիցէ ոք 'ի վեր առիս մասոյ · քան թէ կորանայցես առաջի հզօրի:

## ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

Գ.Ա. խե. 1:

Այսպէս ասէ տէր ած ցօծեալն իւր ցԿիւրոս · զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա հնազանդեցուցանել առաջի նորա զազգս և զզօրութիւն Թագաւորաց խորտակեցից · բացից առաջի նորա զդրունս և քաղաքք մի՛ փակեսցին · ես երթայց առաջի քո զլերինս հարթեցից · և զդրունս պղնձիս խորտակեցից և զնիգս երկաթիս փշրեցից: Եւ տաց քեզ զգանձս խաւարինս և զաւանդս աներևոյթս բացից քեզ · զի ծանիցես թէ ես եմ տր ած՝ որ կոչեցի զանուն քո՝ ածն Իսրայէլի: Վասն յակոբայ ծառայի իմոյ և Իսրայէլի ընտրելոյ · ես կոչեցի քեզ զանուն քո՝ և ընկալայ զքեզ:

## ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ 'Ի ԿԱԹՈՂԻԿԷԱՅՑ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՅՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾ:

Գ.Ա. բ. 13:

Հնազանդ լերո՛ւք ամ մարդկեղէն ստեղծուածոյ վասն տն: Եթէ Թագաւորի, իբրև առաւել ումեք: Եթէ դատաւորաց՝ իբրև 'ի նմանէ առաքելոց, 'ի վրէժխնդրութիւն չարագործաց՝ և 'ի գովութիւն բարեգործաց: Զի այսպէս են կամք այ · բարեգործացն պապանձեցուցանել զանզգամ մարդոյ զանգիտութիւն: Իբրև զազատս լինիլ՝ և մի՛ իբրև զպատրուակ չարութե ունիլ զազատութին · այլ իբրև այ ծառայք: Զամենեսեան պատուեցէ՛ք · զեղբայրսիրութիւն սիրեցէ՛ք · յայ երկերո՛ւք · զԹագաւորս պատուեցէ՛ք:

Պօղոսի Առաքելոյն ՚ի Հռովմայեցւոց
Թղթոյն է ընթերցուածս:

Գլ. ժգ. 1:

Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է ՚ի հնազանդութեան կացցէ . քանզի ոչ գոյ իշխանութիւն եթէ ոչ յաստուծոյ . և որք ենն՝ յաստուծոյ կարգեալ են : Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեանն՝ ա՟յ հրամանին հակառակ կայ . և որք հակառակ կան . անձանց դատաստանս ընդունին : Զի իշխանքն ոչ են ահ բարեաց գործոց՝ այլ չարաց . կամի՞ս չերկնչել յիշխանութենէ անտի՝ զբարիս գործեա՛, և ընկալցիս զգովութիւն ՚ի նմանէ : Զի ա՟յ պաշտօնեայ է քեզ ՚ի բարիս . ապա եթէ զչար գործիցես ,երկի՛ր . զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ . զի ա՟յ սպասաւոր է՝ վրէժխնդիր ՚ի բարկութիւն այնմ որ զչարն գործիցէ : Վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վ՟ս բարկութեան, այլև վասն մտացն խղճի . վ՟ս այնորիկ և հարկս հարկանէք՝ զի ա՟յ սպասաւորք են ՚ի նոյն կանխեալք : Արդ՝ հատուցէ՛ք ամենեցուն զպարտս , որում զհարկ՝ զհարկն . որում զմաքս՝ զմաքսն . որում զերկիւղ՝ զերկիւղն . որում զպատիւ՝ զպատիւն . և մի՛ ումեք պարտապան գտանիցիք : Նաև արդ՝ աղաչեմ նախ քան զա՟մ՝ առնել աղօթս խնդրուածս պաղատանս գոհութիւնս վասն ա՟մ մարդկան . մանաւանդ վ՟ս թագաւորաց և ա՟մ իշխանաց : Զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր . ա՟մ ա՟ծպաշտութեամբ և սրբութեամբ . զի այն է բարի և ընդունելի առաջի փրկչին մերոյ աստուծոյ:

Նոյն առաքելոյն Տիմոթէոսի ՚ի յայն ՚ի Բոյ գլխոյ : սաղմոս ՃԹ. 2 :

Ալէլուիա ալէլուիա :

Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ տէր ՚ի սիոնէ . և տիրեսցես դու ՚ի մէջ թշնամեաց քոց :

Նա ՚ի Գոյ գլխոյ նոյնպէս ՚ի յայն :

Ալէլուիա ոլթի:

Իսկ երբ եպիսկոպոսն էջէ պատարագիչ կամ նախագահն եկեղեցւոյն՝ որում պատշաճի հայրապետին հանդէսի տօնախմբութեանցն, այլ ոմն ՚ի նախագահից քահանայից յառաջ մատուցեալ ՚ի տեղի ընթերցուածոյն ասասցէ :

Խաղաղութիւն ամենեցուն :

Յետ որոյ դպրն ասէ ժամասացին ասացեն.

Եւ ընդ հոգւոյդ քում ։

Եւ յաւարտ նորին ասասցէ քահանայն 'ի ձայն բարձր:

Սբ Աւետարանս Յի՛ Քի՛ ըստ մատթէոսի ։

Եւ ժամասացք դպրաց ասասցեն նոյնպէս 'ի ձայն բարձր ասացեն ։

Երկիւղածութեամբ լուարո՛ւք ։

Եւ 'ի դպրն ասէ:

Փառք քեզ տէր Աստուած մեր ։

Ապա ասասցէ քահանայն նոյնպէս ձայնիւ ։

Ասէ Տէրն մեր Յս Քս ։

Եւ ժամասացքն դպրաց գոչեսցեն բարձր ձայնիւ:

Պռօսխումէ ։

Եւ դպրացն 'ի հանդիպոյ նոյն ձայնիւ:

Ասէ Աստուած ։

Յետ որոյ սկսանիցի քահանայն ընթեռնուլ զաւետարանն:

մատ" Գլ. ԻԲ. 15:

Յայնժամ գնացեալ փարիսեցիքն առին խորհուրդ զնմանէ՝ թէ որպս գնիցեն նմա զորոգայթ բանիւք: Եւ առաքեն առ նա զաշակերտս իւրեանց հերովդիանոսօքն հանդերձ՝ և ասեն, վա՛րդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես. և զճանապարհն այ ճշմարտութեամբ ուսուցանես, և ո՛չ է քեզ փոյթ զումեքէ, և ո՛չ հայիս յերեսս մարդոյ: Արդ՝ ասա՛ մեզ՝ զի՞նչ թուի քեզ, պա՞րտ է հարկս տալ կայսեր՝ թէ ո՛չ: Գիտացեալ յս զչարամտութի նոցա, և ասէ՝ զի՞ փորձէք զիս կեղծաւորք: Ցուցէ՛ք ինձ

ինձ զդահեկան հարկին. և նոքա մատուցին նմա զդահեկան մի: Եւ ասէ ցնոսա Յս. ո՞յր է պատկերս այս՝ կամ գիր. ասեն՝ կայսեր: Յայնժամ ասէ ցնոսա, երթա՛յք տո՛ւք զկայսերն՝ կայսեր. և զԱյն՝ Այ: Եւ նոքա լուեալ՝ զարմացան, և թողին զնա և գնացին:

Եւ [illegible]:

Եւ ևս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛:

Եւ [illegible]:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

[illegible]



Օրհնեալ ես Հայր ամենակալ աստուած ճշմարիտ անսկզբնաբար ծնող որդւոյդ միածնի և բղխող հոգւոյդ սրբոյ:

Օրհնեալ ես որդիդ միածին և բանդ այ ճշմարիտ էակիցդ հօր և սբյ հոգւոյն. ծնեալդ ՚ի հօրէ նախ քան զյաւիտեանս:

Օրհնեալ ես հոգիդ սբ այ ճշմարիտ. բղխեալդ ՚ի հօրէ անժամանակապէս և անսպառաբար փառակից հօր և որդւոյն միածնի: Օրհնեալ ես եռանձնեայ ամենասուրբ երրորդութի անբաժանելի և մի աստուածութի համահաւասար և համագոյ մի էութիւն. մի բնութի. մի տէրութի. և մի իշխանութի. արարիչ և ստեղծող երկնաւորաց և երկրաւորաց. տիրող և նախախնամող կարգադրիչ և զարդարող ամենեցունց: Ամենակալ ամենաբաւական ամենազօր ամենահզօրուտ ամենառատ ամէնողորմ ամենագթած. Թագաւոր Թա-

գաւ

դաւորաց և տէր տերանց որ միայն ունիս զանմահութիւն և բնակեալ ՚ի լոյս անմատոյց. որում հաւատամք խոստովանիմք. և երկիրպագանեմք յամ յանձնէ յամ զօրուէ յամ սըր֊տէ և յամ մտաց ։ Քանզի դու տէր ած մեր գոլով քոյով սեպհականաւ և իւրականաւ փառօքդ փառաւորեալ և քոյով ամենահարուստ բարութդ զուարճացեալ և անկարօտ իսկ այլոց. ոչ կամեցար միայն ունել և վայելել զանճառելիդ բարութի. վս որոյ որպէս թէ ստիպեցեալ ՚ի քումմէ անհնոյ բարերարութէ՝ գոյացուցեր յոչնչէ միով բանիւ արարչականաւ զերկինս վերին և զ՚ի դմին բնակիչ զերկնային զանմարմին և զաներևոյթ էութիւն հրրեշտակականդ դասուց, ՚ի հաղորդել ըստ կարողութե՝ .քումդ բարեաց և լինել փառաբանիչ ամենափառաւոր թագաւորութեանդ ։ Սակայն և այդքիւք ոչ շատացեալ անսպառելի բարութդ՝ յառաջ ածել գոյացուցեր յանէից զերևելիս զայս զերկիր և զ՚ի սմա բնակիչ զերկրային զմարմնաւոր և զնիւթեղէն եղելութիս. զորս և զարդարեցեր երևելի և մարմնաւոր բարութ ։ Արդ տեսեր ամենատեսդ ած, զի ամենայնիւ անհաղորդք, աննմանք, և ամենևին զատեալք էին յիրերաց՝ երկնայինքդ և երկրայինքս. և ոչ գոյր շաղկապ և միջնորդ կցորդօղ. և ընտանեցուցանօղ երկուց տարակացելոց ծայրիցն. և մանաւանդ զբաւական իսկ վայելօղ ոչ գոյր երկրաւորացս բարեաց. (զի երկնայնոցդ լի և կատարուն փառաւորդ էութէց հայթայթելոցդ յամենահարուստ բարութդ՝ ոչ ինչ էր կարօտութի և պակասութի.) վոյ առ ՚ի ցուցանել զամենակարօղ և զամենասքանչ զօրութդ. ստեղծեր զմարդս բանական՝ ամենաստեղծ ձեռօքդ ՚ի հոգւոյ իմանալւոյ և ՚ի մարմնոյ զգալւոյ ըստ պատկերի, և ըստ նմանութեան ստեղծողիդ, և կացուցեր զնա տէր և իշխան ՚ի վր երկրի և երկրականացս հնազանդ առնելով նմա զամ. և ՚ի պատիւ պատկերիդ՝ գերազանցապէս զարդարեցեր զնա փչմամբ յատկական շնորհիդ, և եդեր ՚ի միջի երկուց աննըմանիցն ծայրից շաղկապ և միաւորիչ և վայելօղ երկուցն փառաց և բարութեց ։ Որ ըստ հոգւոյն՝ զհոգևորացն և զերկնայնոցն բերցէ զնմանութիւն. և նոքօք զմայլեսցի. իսկ ըստ մարմնոյն զերկրաւորացս վայելեսցէ զբարութի ։ Արդ՝ մնալոց էր մարդս ՚ի յայս երջանիկ կացութեան և ունելոց էր զայս յատկական պատիւս և գերազանցագունեղ իշ֊

խնամու̃թիս 'ի մէջ ամենից ստեղծուածոց քոց մշտապէս. եթէ ըստ նմանութեան ամենաստեղծ թագաւորիդ. 'ի յողորմութիւն և յիրաւունս իցէր պահեալ զաթոռ թագաւորութեան իւրոյ:

Բայց սակայն թողեալ զնմանու̃թ ստեղծողիդ, և զսէր երկնայնոցդ վայելչու̃թեց պատրանօք նախաչարին. յարեցաւ 'ի մարմնաւորս կոյս, և սոքօք համարեցաւ միայն շատանալ նմանելով անասնոց և անբանից ըստ մարգարէին. և խայտառ մոռացաւ զկամս՝ զօրէնս և զդա̃տաստան քո: Այնուհետև զերկրաւորս հազիւ կարաց գիտել. և որ ինչ առ յոտս իւր կայր. աշխատու̃թբ գտանել ըստ իմաստնոյն: Իսկ զքոյդ և զերկնաւորացդ խորհուրդ ո՛րպէս կարէր գիտել: Արդ՝ այս թշուառաբեր դիպուածս և անողջանալի հիւանդու̃թիս որովհետև հանրական էր. և բոլորի բնու̃թե մարդոյս էր տիրեալ. վա̃ն այնորիկ հանրակարողի և ամենազօր բժշկի կարօտանայր: Վասն որոյ հարկեցեալ 'ի մարդասիրական գթոյդ, հայր երկնաւոր ա̃ծ, առաքեցեր զմիածին որդիդ քո զամենազօր բժիշկդ 'ի յայց քումդ պատկերի: Որոյ և եկեալ փրկական տնօրէնու̃թբն իւրով ազատեաց զբոլոր բնու̃թիս մեր 'ի հանրատարած հիւանդու̃թէն. և 'ի գերու̃թէ նախաչարին. և ծանոյց մեզ զքեզ ճշմարիտ ա̃ծ. և եցոյց մեզ զքոյդ զօրէնս և զդատաստանս. ուսոյց մեզ զերկնայինդ ճանապարհ, խոստանալով զառաջինն երջանկութիւն՝ և պատուիրեաց և՛ասելով թէ՝ ահաւասիկ ողջացար, մի՛ ևս մեղանչիցես. զի մի՛ ևս պատահիցի քեզ այդ թշուառու̃թի:

Արդ՝ ո՜վ բարերար ա̃ծ, և հայր ամենակալ. թէպէտ և ևս բազմապատիկս արար մեզ բարերարութիւն և եցոյց զամենառատ մարդասիրութիւնդ. սակայն՝ գոլով մեր մարմնոյ երկրասիրի պատահել. և 'ի թիւրս դիւրաշարժ մնաց վ՛ճակեցեալ. դժուարաւ կարէաք զերկնայնոցդ խոկալ միշտ. և 'ի մտի ունիլ զքոյդ արդար դատաստան: Իսկ մանաւանդ դու ամենակալ թագաւորդ մեր, և քոյդ դա̃տաստան գոլով աներևոյթ և անտեսանելի 'ի մէնջ. և նստեալ այժմ 'ի յողորմու̃թեդ յաթոռ՝ ո՛չ միշտ 'ի գործածես զարդարութիւնդ երևելապէս. վա̃ն որոյ՝ հաստատեցեր յերկրի զերկրաւոր և զմարմնաւոր թագաւորս. որոց և զսիրտ 'ի ձեռին ունելով ազդես 'ի միտս նոցա զիրաւունս և զկամս քո. և շարժես երևելապէս 'ի վրէժխնդրութիւն չարագործաց, և 'ի

՚ի յապահովութիւն և ՚ի խնամողութիւն բարեգործաց ։ Զորս տեսանելով՝ չարքն բարկասցին. և բարիքն արիասցին. և մանաւանդ այնու ՚ի միտ բերել խոկասցեն զքումդ ահեղ դատաստանէդ ։ Եւ ո՛չ միայն այսր աղագաւ. այլև ՚ի պահպանութիւն և ՚ի յապահովութիւն հաւատացելոցս քոց ՚ի յարձակմանց անօրինաց և ՚ի թշնամեաց եկեղեցւոյ քում սրբոյ։ Որև ըստ այդմ բարեսէր կամացդ, յատկապէս ողորմելով. մեզ նուաստ և անարժան ծառայիցս քոց շնորհեցեր մեզ և երկրիս մերոյ Թագաւոր ( զմեծ Կայսրըն ամ Ռուսաց ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչըն ) զՈՐՈՅ այսօր ծննդեան յիշատակն տօնախմբելով մեծաւ հանդիսաւորութբ. զուարճանամք և ուրախանամք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Արդ՝ ո՛վ բարերար և ողորմած աստուածդ մեր. մեք յետնեալ և անարժան ծառայիքս քո՝ զի՞նչ տացուք անկարօտիդ զօրխուր և զփոխարէն այսքանոյ անհնոյ բարերարութեդ քո. զոչ այլ ինչ ունիմք և կարեմք, բայց միայն զփառս, զգոհութիւնս, և զերկրպագութիւնս՝ հանդերձ մեծաւ շնորհակալութբ վերառաքեսցուք քեզ ՚ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ յամենայն ժամ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Եւ արդ՝ մեք ամենեքեան խոնարհեալ անկանիմք առաջի քո և մեծաւ պաղատանօք հայցեմք յամենառատ յողորմութենէդ քումմէ ( տէր Աստուած մեր ) զի շնորհեսցես ըզ ԱՐ. մեզ (ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչ ամենողորմած Կայսրն ամ Ռուսաց ) ընդ երկայն աւուրս արդարադատ և իրաւախոհ Թագաւորութե, յատկապէս շնորհեա, ողոր

✝ Եթէ հանդէսն վասն ծննդեանն իցէ, այնպէս պարտ ասել որպէս և գրեալն է ՚ի հարկէ իւրում. այլ եթէ իցէ վասն այլ տօնախմբութեանց՝ կարօր պատշաճին պարտ ասել. զոր օրինակ Անուանակոչութե յիշատակն. կամ յաթոռ բազմելոյ յիշատակն։

Իսկ եթէ Թագադրութեանն իցէ յիշատակին՝ այսպէս արժան է ասել.

Թագաւոր ( զմեծ Կայսրն ամենայն Ռուսաց ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչն և մեծ Թագուհի և Կայսերուհի ԱԼԵՔՍԱՆԴՐԱՅ Ֆէօդորովնայ ՈՐՈՑ այսօր Թագադրութեանց յիշատակն տօնախմբելով։

( և այլն որ ՚ի հարկին։)

ողորմութիւն և օգնականութիւն քո անպակաս արասցես ՚ի ՍՈՐԱ-ՆԻ · որովք կացցէ և մնասցէ ՍՈ անախտ հոգւով · քեզ հաճոյ վարուք · մք և ուղղադէտ մտօք · բերկրեալ սրտիւ · զուարթ և ուրախ դիմօք · առողջ և յամենայնէ վտանգէ ազատ մարմնով ՚ի կեանս իւր մինչև ՚ի կէտ կոչմանն իւրոյ · և յետ աստեացս , տացես ՍՈՐԱ. զանվախճան և զյաւիտենական թագաւորութիւնդ ընդ ամ սուրբս քոյ : Այլև արասցես զՍՈ. լինել հանճարեղ ՚ի խորհուրդս , ճշմարիտ և իմաստուն ՚ի բանս · խոհեմ և շըրջանկատ ՚ի գործս · արդարակշիռ ՚ի դատաստանս , ներող և անյիշաչար ՚ի յերբեմնական և ՚ի զղջունակ յանցաւորս · վրէժխնդիր և անաչառ յանզեղջ և ՚ի միշտ չարագործս , ողորմած և քաղցր ՚ի յաղքատս , ՚ի տնանկս , ՚ի յորբս և յայրիս · սիրօղ և խնամածու սիրելեաց և հընազանդելոց իւրոց · ահարկու և երկիւղալի թշնամեաց իւրոց :

Օ թագաւորութի ՍՈՐԱ. յաղթօղս · զօրաւորս և անպարտելիս արասցես ՚ի վերայ ամ թագաւորութեց. ձեռն քո ընկալցի և բազուկ քո զօրացուսցէ զՍՈ. · զթշնամիս ՍՈՐԱ. հալածականս արասցես · և ըզկործանեալս ՚ի վերայ ՍՈՐԱ. ՚ի ներքոյ ոտից ՍՈՐԱ. արկցես : Քո ամենայաղթ զօրութեամբդ և սբյ խաչիդ նշանաւն ամրացուսցես և պարսպեալ պահպանեսցես զՍՈ. և զԹագաւորութիւն ՍՈՐԱ. յամենից յերևելեաց և յաներևութից թշնամեաց : Աճեցուսցես և պտղաբերս արասցես զՍՈ. արքայազնօք և քոյապալւի և զաւակօք: Անպակասելի և անթառամելի արասցես ըզԹագաւորութի ՍՈՐԱ. յազգէ յազգ՝ և յորդւոց յորդիս մինչև ՚ի կատարած աշխարհի: Օրհնեսցես զԹագաւորս (մեր զմեծ Կայսրն ամենայն Ռուսաց ըզ ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչն. ՈՐՈՅ այսօր ծննդեանն է միշատակ · ) (հոս ասելոցն ըստ նշանակեցեալ ներքոյին յառաջին մասին ՚ի վերայ:) և զԹագաւորութիւն ՍՈՐԱ: զյարկ և զընակութիւն ՍՈՐԱ: զժառանգաւորս · զծընունդս , զազգս և զամ ընտանիս ՍՈՐԱ: Օրհնեսցես զամ հաւատարիմ և զարտացու գործակալս ՍՈՐԱ: զնախարարս , զիշխանս , զկուսակալս · զօրապետս և զամենայն զօրս ՍՈՐԱ: զօրացուսցես և արիացուսցես ՚ի պատերազմունս թշնամեաց · որոց մինն զհազարս նոցա հալածեսցէ , և երկուքն զբիւրս նոցա հարցէ : Դու լիցիս նոցա մարտակից և զինու

Նաւորդկից՝ որդ լինել ընդ մե_ռելոյ · ընդ կեսալոյ · ընդ գաւթի · և ընդ այլոց ծառայից քոց ։ Օրհ_նեցես զամենեսեան որք ընդ իշխանութեամբ ԱՄԻՐ կան · զեկեղեցա_կանս և զաշխարհականս · զմեծամեծս և զփոքունս · զարս և զկանայս · և զամենայն ժողովուրդս ԱՄԻՐ։ Օրհնեցես զմեզ կալուած և զեր_կիր և զմեծակ ԱՄԻՐ զցնակոն և զմանկունս ։ Որոց ամենեցունց տացես կեալ և ճոխ աստուածային վարուք և բարեպաշտական կենցա_ղավարութեամբ ըստ հաճոյից քոց · հաստատութեամբ և մաքրու_թեամբ · խաղաղութեամբ և հնա_զանդութեամբ առ Թագաւորս մեր · և սիրով և խաղաղութեամբ առ միմեանս ։ Նոյնպէս և զօրս բարեպաշտ Թագաւորիս մերոյ ( ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴուլմէջիտ ) քաղցր և գթած պահեսցես առ ամ ստորադրեցելոյն իւր · և միամտութեամբ առ խաչակիր ազգս Հայոց · ընդ ՈՐՈՅ հովանաւորութեամբն մի_նալով 'ի խաղաղութեան, փառաւո_րեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն ։

Եւ ժողովուրդն աղօթելով զայն հայցեն ամենեքեան, և սկսանիցեն հասարակ շնորհօքա_յին հարցն, ասացեալ ։

Յառաջ ժամուցեալ [illegible] ժամեանն 'ի ժամուն երգեսցեն ձայնիւ ըստ կարգի եկեղեցական նախօրդաց ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ·

Եւ պարառեալսն երգեսցեն ձայն ։

Տէր ողորմեա ։

Վասն 'ի վերուստ խաղաղութեան աշխարհիս և օգնականութեան Թագաւորի մերոյ ( ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴուլմէջիտ ) զՏէր աղաչեսցուք ։

Ողորմեա մեզ Տէր ած մեր ըստ մեծի ողորմութեան քում ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ։

Եւ

Եւ պարաւեալն երգեցեն նոյնպէս երիցս :

Տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛ :

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից :

Յորժամ սարկաւագունքն երգեցեն ժողովուրդն ձայնիւ մեծաւ :

Ամէն :

Եւ դպիրքն և հասարակաց ժողովուրդն զմեծութիւն ՚ի ձեռն երգեցեն նոյնպէս ժողովրդ ձայնիւ :

Ալէլուիա. ալէլուիա ալէլուիա :

Եւ յապա ալէլուիայն՝ ասասցէ հանդիսատէրն. և ընդ նմա պատարագեալն ամենեքեան՝ աստուծոյ ժողովրդեան միաբանութեամբ :

Օրհնեսցի և պաշտպանեսցի և նախախնամեալ պահեսցի Թագաւորութիւն ամենաբարեպաշտ ինքնակալ. մեծ Թագաւորի և Կայսեր մեր Տեառն ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչի. այս նշանաւ որ Խաչիւս և որ Աւետարանաւս և աւուրս շնորհիւ. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից :

Սարկաւագունքն երգեցեն :

Ամէն :

Հասարակութեանն դպրաց նոյն ժամերգն :

Ալէլուիա ալէլուիա ալէլուիա :

Եւ ապա հրեշտակն երիցս հայցեալ անշարժութեամբ ՚ի նմին տեղւոջ. և յապա երրորդին աստուծոյ ձայն սարկաւագունք :

Ամէն

Ամէն ։

Յորժամ պատարագեալն տայցէն ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Յետ որոյ ժողովրդեան սարկաւագն ։

Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛ ։

Եւ կատարօղն հանդերձեալն՝ ասասցէ աղօթսն ։

Պահպանեա՛ Տէր Աստուած զԹագաւորն մեր զինքնակալ Կայսրն ամ[ենայն] Ռուսաց ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչ (Եւ եթէ ունիցի ընդ իւր շարա [illegible] ։) և զԹագաւորութիւն ՆՈ-ՐԱ. և զամ[ենայն] զժողովուրդս քո ընդ հովանեաւ Տէր և սրատակական Խաչի քո ՚ի խաղաղութեան փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն. արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Յետ որոյ ։

Օրհնեալ Տէր մեր Յ[իսու]ս Ք[րիստո]ս ։

Եկեղեցին ։

Ամէն ։

Կատարօղն հանդերձեալն ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗУСО-Арм. ССР

18

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. Եկեսցէ արքայութիւն քո. եղիցի կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս:

Օրհնեալք եղերուք ՚ի շնորհաց ս՟ր հոգւոյն. երթայք խաղաղութ՟բ. և տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ.

Ամէն:

# ԱՒԱՐՏ.



## Ցուցակ Թագաւորական տօնից ։

### ՅՈՒՆՎԱՐ

1 ✠ Սկզբնաւորութիւն նոր տարւոյ տեառնագրութեամբ ։ և Ծնունդ Կայսերական Բարձրութեանն Բարեպաշտ Թագուհւոյ և մեծ Դշխոյի Ելենէ Պաւլովնի ։

7 Ծնունդ Կայսերական Բարձրութեանն Բարեպաշտ Թագուհւոյ և մեծ Դշխոյի Աննայ Պաւլովնի ։

16 Ծնունդ Կայսերական Բարձրութեանն Բարեպաշտ Թագուհւոյ և մեծի Դշխոյի Աղեքսանդրայ Միխայելովնայի ։

28 ✠ Ծնունդ Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագաւորի և մեծի Իշխանի Միխայէլ Պաւլովիչի ։

### ՓԵՏՐՎԱՐ ։

3 Անուանակոչութիւն Կայսերական Բարձրութեանն Բարեպաշտ Թագուհւոյ և մեծի Դշխոյի Աննայ Պաւլովնի ։

4 Ծնունդ Կայսերական Բարձրութեանն Բարեպաշտ Թագուհւոյ և մեծի Դշխոյի Մարիայ Պաւլովնի ։

25 Ծնունդ Կայսերական Բարձրութեանն Բարեպաշտ Թագուհւոյ և մեծի Դշխոյի Մարիայ Միխայելովնայի ։

### ԱՊՐԻԼ ։

17 ✠ Ծնունդ Կայսերական Բարձրութեանն Բարեպաշտ Թագաւորի և Ժառանգի Կայսրութեան Մեծի Իշխանի Աղեքսանդրի Նիկոլայեւիչի ։

21 ✠ Անուանակոչութիւն Կայսերական Մեծութեան Ամենաբարեպաշտ Թագուհւոյ և Կայսրուհւոյ Աղեքսանդրայ Ֆէոդորովնի և Բարեպաշտ Թագուհւոյ և Մեծի Դշխոյի Աղեքսանդրայ Նիկոլայեւնի, Բարեպաշտ Թագուհւոյ և մեծի Դշխոյի Աղեքսանդրայ Միխայելովնի ։

### ՄԱՅԻՍ ։

21 ✠ Անուանակոչութիւն Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագաւորի և Մեծի Իշխանի Կոստանդին Նիկոլայեւիչի. և Բարեպաշտ

Թագ

Թագուհւոյ և Մեծի Դքսուհւոյ Ելենէ Պաւլովնի. և Ծնունդ Կայսերական Բարձրութեանն Բարեպաշտ Թագուհւոյ և Մեծի Դքսուհւոյ Եղիսաւէտի Միխայելովնայի:

## ՅՈՒՆԻՍ

25 ✠ Ծնունդ Կայսերական Մեծութեանն Ամենաբարեպաշտ և Մեծ Թագաւորին և Կայսերն ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչին Ինքնակալի ամենայն Ռուսաց. և Նորին Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագուհւոյ և Մեծի Դքսուհւոյ Աղէքսանդրայ Նիկօլայեվնի:

## ՅՈՒԼԻՍ

1 ✠ Ծնունդ Կայսերական Մեծութեան Ամենաբարեպաշտ Թագուհւոյ և Կայսրուհւոյ Աղէքսանդրայ Ֆէօդորովնի:

11 Անուանակոչութիւն Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագուհւոյ և Մեծի Դքսուհւոյ Օլգայ Նիկօլայովնի:

22 Անուանակոչութիւնք Կայսերական Բարձրութեանց Բարեպաշտ Թագուհեաց և Մեծ Դքսուհեաց Մարիայ Նիկօլայովնի, Մարիայ Միխայէլովնի և Մարիայ Պաւլովնի:

27 ✠ Ծնունդ և Անուանակոչութիւն Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագաւորի և Մեծի Իշխանի Նիկօլայ Նիկօլայեվիչի:

## ՕԳՈՍՏՈՍ

6 Ծնունդ Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագուհւոյ և Մեծի Դքսուհւոյ Մարիայ Նիկօլայովնի:

16 Ծնունդ Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագուհւոյ և Մեծի Դքսուհւոյ Եկատարինէ Միխայելովնայի:

22 ✠ Թագադրութիւն Կայսերական Մեծութեան Ամենաբարեպաշտ և Մեծ Թագաւորի և Կայսերն ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչի Ինքնակալին ամենայն Ռուսաց և Ամուսնոյ նորա Ամենաբարեպաշտ Թագուհւոյ և Կայսրուհւոյ Աղէքսանդրայ Ֆէօդորովնի:

30 ✠ Անուանակոչութիւն Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագաւորի և Ժառանգի Կայսերացն Մեծի Իշխանի Աղէքսանդրի Նիկօլայեվիչի և Ծնունդ Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ

պաշտ Թագուհւոյ և Մեծի Դքսուհւոյ Օլղայ Նիկօլայեվնի:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

5 Անուանակոչութիւն Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագուհւոյ և Մեծի Դքսուհւոյ Եղիսաւէտ Միխայելովնի:

9 ✠ Ծնունդ Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագաւորի և Մեծի Իշխանի Կոստանդին Նիկօլայեվիչի:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

13 ✠ Ծնունդ Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագաւորի և Մեծի Իշխանի Միխայէլ Նիկօլայեվիչի:

## ՆՈՅԵՄԲԵՐ

8 ✠ Անուանակոչութիւն Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագաւորի և Մեծի Իշխանի Միխայէլ Պաւլովիչի, և Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագաւորի և Մեծի Իշխանի Միխայէլ Նիկօլայեվիչի:

20 ✠ Գահակալութիւն Կայսերական Մեծութեան ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչի Ամենաբարեպաշտ Թագաւորի և Կայսերն Ռուսաց:

24 Անուանակոչութիւն Կայսերական Բարձրութեան Բարեպաշտ Թագուհւոյ և Մեծի Դքսուհւոյ Եկատարինէ Միխայելովնի:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

6 ✠ Անուանակոչութիւն Կայսերական Մեծութեան Ամենաբարեպաշտ Մեծ Թագաւորի և Կայսերն ՆԻԿՈԼԱՅ Պաւլովիչի Ինքնակալին ամենայն Ռուսաց:

25 ✠ Ծնունդ Տեառն ըստ Ռուսաց. և յիշատակ Ազատութեան Եկեղեցւոյ և Տէրութեան Ռուսաց յարշաւանաց Գաղղիացւոց և ընդ նոսա միացեալ քսան ազգաց:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

